ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 55(3), 2021 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 551.58

ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Հոդվածում բացահայտվել է գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման և գյուղերի մարդաքանակի տարածքային տարբերություններն ու առանձնահատկությունները: ՀՀ լեռնային բնույթը նվազեցնում է բնակեցման արեալը և իր ազդեցությունն է թողնում գյուղական տարաբնակեցման տարածքային պատկերի վրա: ՀՀ-ը առանձնանում է ինչպես ամբողջ բնակչության այնպես էլ գյուղական բնակչության ու բնակավայրերի անհավասարաչափ տեղաբաշխմամբ: Գյուղական բնակչության բաշխվածությունն ըստ բնակավայրերի մարդաքանակի խմբերի առանձնանում է բևեռացվածությամբ: Մշտական բնակչություն ունեցող գյուղերի 19%-ը կազմող մինչև 200 բնակիչ ունեցող 176 գյուղում ապրում է ՀՀ գյուղական բնակչության 1,5%-ը, իսկ 3000-ից ավելի մարդ ունեցող խմբում՝ գյուղերի թվի 10,4%-ում՝ 38%-ը: 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում է ապրում գյուղական բնակչության 83%-ը, սակայն դրանք կազմում են գյուղերի թվի 43,1%-ը, իսկ 201–1000 բնակիչ ունեցող գյուղերում, որոնց բաժին է ընկնում գյուղերի թվի 37,8%-ը՝ ընդամենը 15,4%-ը: ՀՀ բարձրության տարբեր գոտիներում գյուղերի և բնակչության թվի բաշխվածությունը պայմանավորված է պատմաաշխարհագրական, բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական, ուրբանացման, տարածաշրջանային, աշխարհաքաղաքական և տեղային այլ պայմաններով ու գործոններով: Գյուղերը բաշխված են 400–2350 *մ* բարձրությունների վրա, սակայն գյուղերի մեծ թվաքանակի «կուտակումով» առանձնանում են 801–1000 և 1801–2000 *մ* բարձրության գոտիները: 801–1000 *մ* բարձրության գոտում ապրում է երկրի գյուղական բնակչության ավելի քան 35%-ը, սակայն այդ գոտուն բաժին է ՀՀ տարածքի 8,3%-ը, իսկ 1801–2000 *մ* բարձրության գոտում՝ 16,2%-ը: ՀՀ-ում գյուղերի և բնակչության թվի բաշխվածությունն ըստ բարձրության գոտիների ևս առանձնանում է բևեռացվածությամբ: Դա պայմանավորված է տարբեր բարձրության գոտիներում բնակավայրերի տեղաբաշխման և զարգացման համար բնա-տարածքային հնարավորությունների մեծ տարբերություններով: ՀՀ-ը առանձնանում է ինչպես բարձրության տարբեր գոտիների միջև գյուղական բնակչության և բնակավայրերի թվաքանակի մեծ տարբերություններով, այնպես էլ գյուղերի միջին մարդաքանակիև վերջինիս տարածաշրջանային մեծ տարբերություններով: ՀՀ գյուղական բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և գյուղերի մարդաքանակի աշխարհագրական առկա պատկերը իր ազդեցություն է թողնում ինչպես ՀՀ տնտեսության, այնպես էլ մարզերի, տարածաշրջանների և գյուղական բնակավայրերի զարգացման տարբեր կողմերի վրա: Կառավարման տարբեր մակարդակներում սոցիա-տնտեսական զարգացման տարաբնույթ ծրագրերի իրականացումը պետք է նպաստի ՀՀ-ում գյուղական բնակչության բաշխման միջև առկա բևեռացվածության նվազեցմանը:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.3.189

* E-mail: a.potosyan@ysu.am

***Keywords*:** rural settlement, territorial structure, population number, elevation zones, polarization.

Խնդրի դրվածքը: Տարածքի փոքր չափը, հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածությունը, բացարձակ մեծ բարձրությունները, թեքությունները և բնաաշխարհագրական այլ երևույթները զգալիորեն նվազեցնում են ՀՀ բնակեցման արեալը և իրենց անմիջական ու միջնորդավորված ազդեցությունն են թողնում գյուղական բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և գյուղական տարաբնակեցման տարածքային պատկերի վրա: Մյուս կողմից՝ հասարակական զարգացման գործընթացներին զուգընթաց գնալով մեծացել և մեծանում է բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և տարաբնակեցման զարգացման վրա արտադրական, ոչ արտադրական և ենթակառուցվածքային գործոնների ազդեցության աստիճանն, այսինքն՝ տնտեսական առաջընթացը նախադրյալներ է ստեղծում բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և տարաբնակեցման համակարգի զարգացման համար նաև համեմատաբար ոչ բարենպաստ պայմաններ ունեցող լեռնային տարածքների տարբեր հատվածներում:

Տնտեսական զարգացման, աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ժամանակակից իրողությունների պայմաններում առանձնակի կարևորություն և նշանակություն ունի ՀՀ գյուղական տարաբնակեցման առկա պատկերի վերլուծությունը, խնդիրների բացահայտումը և լուծման ուղիների մատնանշումը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տարաբնակեցումը հանդիսանում է հասարակության տարածքային կազմակերպման հենքը և նրանում տեղի ունեցող փոփոխությունները, զարգացման և շարժընթացի միտումներն իրենց նշանակալից ազդեցությունն են թողնում տարածքի յուրացման, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման և տեղաբաշխման, իսկ ՀՀ սահմանամերձ տարածաշրջաններում՝ երկրի պաշտպանունակության կազմակերպման և ամրապնդման վրա:

Հետազոտության սկզբնաղբյուրները և մեթոդները: Հետազոտության համար սկզբնաղբյուրային նյութ են ծառայել ՀՀ մարզերի և առանձին տարածաշրջանների գյուղական բնակավայրերի 2020 թ. հունվարի մեկի դրությամբ բնակչության թվաքանակի վերաբերյալ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները [1], ՀՀ բոլոր գյուղական բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բարձրության տվյալները: Աշխատանքում կիրառվել են վիճակագրական վերլուծության, ամփոփման, ընդհանրացման և համեմատական աշխարհագրական մեթոդները:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: 2020 թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցը բաղկացած էր 954 գյուղից, որից 33-ը չեն ունեցել մշտական բնակչություն: Ըստ ընթացիկ հաշվառման տվյալների հանրապետության գյուղական բնակչության թիվը 2020 թ. հունվարի մեկի դրությամբ կազմել է 1067,6 հազ. մարդ, կամ երկրի բնակչության 36,1%-ը [2]: Իսկ ՀՀ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվությունների հիման վրա ստացված տվյալների հաշվարկով այն կազմել է 1183221 մարդ [1]: Նշված երկու տվյալների միջև տարբերությունը պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ [1]: Մեր հետազոտության համար

հիմք է ծառայել ՀՀ գյուղական բնակչության և գյուղական բնակավայրերի վերաբերյալ նշված սկզբնաղբյուրը, քանի որ ՀՀ վիճակագրական կոմիտեն ընթացիկ հաշվառման միջոցով մարզերի, տարածաշրջանների և առանձին գյուղական բնակավայրերի վերաբերյալ տվյալներ չի հրապարակում:

ՀՀ տարածքն առանձնանում է ինչպես ամբողջ բնակչության, այնպես էլ գյուղական բնակչության ու բնակավայրերի խիստ անհավասարաչափ տեղաբաշխմամբ: Արարատի, Արմավիրի, Արտաշատի, Աշտարակի, Էջմիածնի, Բաղրամյանի, Կոտայքի, Մասիսի և Նաիրիի տարածաշրջաններում, որոնք զբաղեցնում են երկրի ցամաքային տարածքի ընդամենը 17,2%-ն, ապրում է ՀՀ գյուղական բնակչության 47,5%-ը: Իսկ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում, որոնք զբաղեցնում են ՀՀ ցամաքային տարածքի 24,3%-ն, ապրում է երկրի գյուղական բնակչության ընդամենը 6,5%-ը: Հարկ է նաև նկատել, որ 2015–2020 թթ. ընթացքում հանրապետության գյուղական բնակչության տեղաբաշխման վերը նշված խիստ անհամամասնությունն էլ ավելի է մեծացել: 2015 թ.-ի համեմատությամբ Արարատյան դաշտում և հարակից նախալեռնային գոտում ապրող գյուղական բնակչության մասնաբաժինն ՀՀ ամբողջ գյուղական բնակչության մեջ ավելացել է տոկոսային 1,3 կետով, իսկ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում միասին՝ նվազել է տոկոսային 0,7 կետով [1, 3]:

Հանրապետության տարածքում գյուղական բնակչության տեղաբաշխման այդպիսի խիստ անհամամասնության հետևանքով զգալիորեն մեծ է նաև տարբերություններն առանձին մարզերի և տարածաշրջանների միջև գյուղական բնակչության խտության ցուցանիշների առումով: Դրանով պայմանավորված, այն մարզերն ու տարածաշրջաններն, որոնք ունեն գյուղական բնակչության և բնակավայրերի առավել մեծ խտություն, ՀՀ-ում, գյուղատնտեսության զարգացման ժամանակակից մակարդակի պայմաններում, առանձնանում են տարածքի յուրացվածության և տնտեսական զարգացման ու գործունեության համեմատաբար ավելի բարձր մակարդակով, նոսր բնակեցված մարզերն ու տարածաշրջանները՝ համեմատաբար ցածր մակարդակով:

Գյուղական տարածքների և տարաբնակեցման բնութագրական կարևոր ցուցանիշներ են համարվում ոչ միայն բնակչության ու բնակավայրերի ֆիզիկական բաշխման բացարձակ և հարաբերական ցուցանիշները, այլ նաև բնակչության բաշխումն ըստ բնակավայրերի մարդաքանակի խմբերի: Գյուղերի մարդաքանակը, օբյեկտիվորեն լինելով մի շարք գործոնների ներգործության հետևանք, իր հերթին պայմանավորում է տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները և գյուղական տարածքի յուրացվածության աստիճանը:

ՀՀ գյուղական բնակչության բաշխվածությունն ըստ բնակավայրերի մարդաքանակի խմբերի առանձնանում է խիստ բևեռացվածությամբ: Մշտական բնակչություն ունեցող գյուղերի 19%-ը կազմող բնակավայրերի խմբում (մինչև 200 բնակիչ ունեցող 176 գյուղում) ապրում է երկրի գյուղական բնակչության ընդամենը 1,5%-ը, իսկ 3000-ից ավելի բնակչություն ունեցող խմբին, որոնք կազմում են ընդհանուր թվի 10,4%-ը, բաժին է ընկնում գյուղական բնակչության 38%-ից ավելին: 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում ապրում է գյուղական բնակչության 83%-ը, սակայն դրանք կազմում են երկրի գյուղերի ընդհանուր թվի 43,1%-ը, իսկ 201–1000 բնակիչ ունեցող գյուղերում, որոնց բաժին է ընկնում ՀՀ գյուղերի ընդհանուր թվի 37,8%-ը, ապրում է գյուղական բնակչության ընդամենը 15,4%-ը (աղյ. 1):

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ բնակավայրերի մարդաքանակի խմբերի

Մարզերը	Բնակավայրերի և բնակչության բաշխումն ըստ գյուղերի մարդաքանակի, մարդ																		
	մինչև 50		51–100		101–200		201–500		501–1000		1001–3000		3001–5000		5000-ից ավելի		գյուղեր		
																	ընդամենը	բնակչության չունեցող	ընդամենը բնակչության
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ			
Արագածոտն	4	56	3	232	13	2008	27	9631	29	18962	30	46490	8	31224	2	12190	116	1	120793
Արարատ	–	–	–	–	4	624	1	277	15	10843	57	108976	12	45080	5	35472	94	1	201272
Արմավիր	–	–	–	–	2	317	3	987	10	7755	60	113880	17	61474	3	18244	95	0	202657
Գեղարքունիք	–	–	4	272	8	1155	22	7448	14	9624	22	41680	10	43123	9	61724	89	4	165026
Լոռի	8	220	10	812	13	2064	30	9674	22	16549	32	53352	3	11788	2	11623	120	2	106082
Կոտայք	1	17	1	61	1	168	6	1942	16	11318	25	49813	5	18633	7	44273	62	0	126225
Շիրակ	7	184	6	499	12	1777	28	9032	31	22702	32	48920	4	13063	2	15114	122	5	111291
Սյունիք	18	533	22	1591	26	3755	30	9109	14	10049	10	17054	–	–	–	–	120	11	42091
Վայոց ձոր	2	65	2	165	8	1264	12	3639	9	6681	11	18232	–	–	1	5071	45	7	35117
Տավուշ	–	–	–	–	1	166	13	4578	16	11062	22	34699	6	22162	–	–	58	2	72667
ՀՀ-ում	40	1075	48	3632	88	13298	172	56317	176	125545	301	533096	65	246547	31	203711	921	33	1183221
ՀՀ-ում %-ով	4,3	0,1	5,2	0,3	9,6	1,2	18,7	4,8	19,1	10,6	32,7	45,0	7,0	20,8	3,4	17,2	100	100	100

ա՝ գյուղերի թիվը, բ՝ բնակչության թիվը, ըստ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2020 թ. (Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներով):

Ըստ գյուղերի մարդաքանակի ՀՀ գյուղական բնակչության բաշխվածության բևեռացվածությունն ունի տարածքային զգալիորեն մեծ տարբերություններ: Այս առումով առավել տիպական են Արմավիրի և Սյունիքի մարզերը: Առաջինում գյուղական բնակչության 95,5%-ն ապրում է 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում (դրանք կազմում են գյուղերի ընդհանուր թվի 84%-ը), իսկ Սյունիքում 1000-ից ավելի բնակիչ ունեն ընդամենը 10 գյուղ (8,3%) և դրանց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 40,5%-ը: Ընդհանուր առմամբ Սյունիքի մարզի գյուղական բնակչության 45,5%-ն ապրում է 201–1000 բնակիչ ունեցող 44 գյուղում, իսկ մարզի գյուղերի 72%-ը կազմող խմբին (մինչև 200 բնակիչ ունեցող 66 գյուղի) բաժին է ընկնում գյուղական բնակչության ընդամենը 14%-ը: Մարզային կտրվածքով ՀՀ գյուղական բնակչության ըստ բնակավայրերի մարդաքանակի բաշխվածության վերաբերյալ առավել հանգամանալից պատկերացում են տալիս աղյ. 1-ը, իսկ մարզերի և տարածաշրջանների գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակի մասին՝ աղյ. 2-ի տվյալները:

ՀՀ գյուղական տարաբնակեցումն առանձնանում է ոչ միայն հորիզոնական-տարածքային, այլ նաև ուղղաձիգ-տարածքային պատկերի առանձնահատկություններով, ինչպես նաև տարածաշրջանային և տարածքային նկատելի տարբերություններով:

ՀՀ տարածքի բարձրության տարբեր գոտիներում գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխվածությունը պայմանավորված է փոխադարձորեն միմյանց հետ կապված պատմաաշխարհագրական, բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական, ուրբանացման, տարածաշրջանային, աշխարհաքաղաքական և տեղային այլ պայմաններով ու գործոններով, որոնց մենք անդրադարձել ենք մեր նախորդ աշխատանքներում [3–5]:

Աղյուսակ 2

ՀՀ մարզերի և տարածաշրջանների գյուղերի միջին մարդաքանակը 2020 թ.

Մարզերը և տարածաշրջանները	Գյուղերի թիվը	Գյուղական բնակչության թիվը	Գյուղերի միջին մարդաքանակը	Մշտական բնակ-չություն չունեցող գյուղերի թիվը
Արագածոտն մարզ	117	120793	1041	1
Աշտարակի	34	54894	1663	1
Արագածի	22	15947	725	0
Ապարան	20	17210	861	0
Թալինի	41	32742	799	0
Արարատ մարզ	95	201272	2141	1
Արարատի	39	74329	1956	1
Արտաշատի	30	64194	2140	0
Մասիսի	26	62749	2413	0
Արմավիր մարզ	95	202657	2133	0
Արմավիրի	37	81608	2206	0
Էջմիածնի	43	98545	2292	0
Բաղրամյանի	15	22504	1500	0
Գեղարքունիք մարզ	93	165026	1854	4
Գավառի	11	34289	3117	0
Վարդենիսի	35	24052	707	1
Սևանի	11	21324	1939	0
Մարտունու	18	77129	4537	1
Կրասնոսելսկի	18	8232	457	2
Լոռի մարզ	122	106082	884	2
Գուգարքի	26	25185	1049	2
Թումանյանի	34	24243	713	0
Սպիտակի	20	27345	1367	0
Ստեփանավանի	19	14188	747	0
Տաշիրի	23	15121	657	0
Կոտայք մարզ	62	126225	2035	0
Հրազդանի	16	22830	1427	0
Կոտայքի	30	60677	2023	0
Նաիրիի	16	42718	2670	0
Շիրակ մարզ	127	111291	912	5
Ախուրյանի	33	44446	1389	1
Ամասիայի	25	5630	256	3
Աշոցքի	26	11327	436	0
Անիի	18	15845	644	1
Արթիկի	23	34043	1480	0
Սյունիք մարզ	131	42091	351	11
Կապանի	57	6657	133	7
Գորիսի	27	79642	818	3
Մեղրու	13	1926	160	1
Սիսիանի	34	13866	408	0
Վայոց ձոր մարզ	52	35117	780	7
Եղեգնաձորի	31	27871	1032	4
Վայքի	21	7246	403	3
Տավուշ մարզ	60	72667	1252	2
Իջևանի	19	26686	1570	2
Նոյեմբերյանի	17	21885	1287	0
Տավուշի	16	17946	1122	0
Դիլիջանի	8	6150	769	0
ՀՀ-ում	954	1183221	1285	33

Ավելացնենք միայն, որ այդպիսի գործոնների ազդեցությունը կոնկրետ այս կամ այն տարածաշրջանում, մարզում, սահմանամերձ կամ այլ կարգավիճակ ունեցող տարածաշրջանում, գյուղական տարաբնակեցման զարգացման և շարժընթացի վրա դրսևորվում է տարածքային կամ տարածաշրջանային նկատելի տարբերություններով և կրում է տարածաժամանակային մշտական փոփոխություններ: Այդպիսի փոփոխությունների միտումների բացահայտումը և առկա հիմնախնդիրների լուծման ուղղիների մատնանշումն ունի գիտա-կիրառական կարևոր նշանակություն:

ՀՀ տարածքում գյուղական բնակավայրը բաշխված են ծովի մակարդակից 400–2350 *մ* բարձրությունների վրա, սակայն գյուղերի առավել մեծ թվաքանակի «կուտակումով» նախ և առաջ առանձնանում են 801–1000 *մ* և 1801–2000 *մ* բարձրության գոտիները: Դրանց միասին բաժին է ընկնում ՀՀ մշտական բնակչություն ունեցող գյուղերի ընդհանուր թվի 37,7%-ը (21,6+16,1) (աղյ. 3): Թեև 801–1000 *մ* բարձրության գոտուն բաժին է ընկնում ՀՀ տարածքի ընդամենը 8,3%-ը [6], սակայն այստեղ է կենտրոնացված հանրապետության գյուղական բնակչության 35,2%-ը, իսկ 1801–2000 *մ* բարձրության գոտում՝ 16,2%-ը: Վերջինիս բաժին է ընկնում ՀՀ տարածքի 12,8%-ը [6]: Գյուղական բնակավայրերի և բնակչության առավել մեծ թվաքանակով առանձնանում են նաև 1401–1600 *մ* և 1601–1800 *մ* բարձրության գոտիները: Նշված գոտիներում են գտնվում ՀՀ գյուղերի մոտ 30%-ը և դրանց բաժին է ընկնում հանրապետության գյուղական բնակչության 21,6 %-ը (աղյ. 3):

Աղյուսակ 3

ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների 2020 թ.

Մարզերը	Բարձրության գոտիները, *մ*																			
	մինչև 800		801–1000		1001–1200		1201–1400		1401–1600		1601–1800		1801–2000		2001–2200		2200-ից բարձր		բնակավայրեր	բնակչություն
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
Արագածոտն	–	–	2	2246	14	31638	11	22296	17	14217	17	11615	28	21449	26	16050	1	1282	116	120793
Արարատ	2	1773	81	190609	3	5242	2	1070	–	–	3	1508	3	1070	–	–	–	–	94	201272
Արմավիր	–	–	89	194934	5	7197	1	526	–	–	–	–	–	–	–	–	–	–	95	202657
Գեղարքունիք	–	–	–	–	2	704	1	824	3	317	3	1984	46	121389	32	39674	2	134	89	165026
Լոռի	8	7405	5	4136	12	9287	25	24293	34	18646	32	37441	4	4874	–	–	–	–	120	106082
Կոտայք	–	–	–	–	5	20454	12	42991	21	36074	16	21634	5	4333	3	739	–	–	62	126225
Շիրակ	–	–	–	–	–	–	1	353	32	43517	28	29478	37	32352	23	5335	1	256	122	111291
Սյունիք	6	1682	7	729	26	5747	19	6772	17	8257	24	14320	16	3338	5	1246	–	–	120	42091
Վայոց ձոր	–	–	2	3072	3	4415	3	9425	14	9852	11	4713	9	3335	3	305	–	–	45	35117
Տավուշ	31	37276	13	20476	7	8348	5	5289	2	1278	–	–	–	–	–	–	–	–	58	72667
ՀՀ-ում	47	48136	199	416202	77	93032	80	113839	140	132158	134	122693	148	192140	92	63349	4	1672	921	1183221
ՀՀ-ում %-ով	5,1	4,1	21,6	35,2	8,4	7,9	8,7	9,6	15,2	11,2	14,5	10,4	16,1	16,2	10,0	5,3	0,4	0,1	100	100

ա՝ գյուղերի թիվը, բ՝ բնակչության թիվը, ըստ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2020 թ. (Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներով):

ՀՀ տարածքում գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխվածությունն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գոտիների ևս առանձնանում է խիստ բևեռացվածությամբ: Դա նախ և առաջ պայմանավորված է տարածքի լեռնային բնույթով՝ ծովի մակարդակից տարբեր բարձրության գոտիներում բնակավայրերի տեղաբաշխման և զարգացման համար բնատարածքային հնարավորությունների մեծ տարբերություններով, աշխարհագրական դիրքով, սոցիալ-տնտեսական և զարգացման այլ գործընթացներով:

Աղյ. 3-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում առկա է բարձրության միևնույն գոտու սահմաններում գյուղական բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման, ինչպես նաև խտության զգալիորեն մեծ տարբերություններ: Մինչև 800 *մ* բարձրության գոտում գյուղական բնակչության շուրջ 77,5%-ը բաժին է ընկնում Տավուշի, 15,3%-ը՝ Լոռում մարզին: Բարձրության 801–1000 *մ* գոտում գյուղական բնակչության 92,6%-ը բաժին է ընկնում Արարատի և Արմավիրի մարզերին, 4,9%-ը՝ Տավուշին, մնացածը՝ Լոռու, Վայոց ձորի, Արագածոտնի և Սյունիքի մարզերին:

ՀՀ-ն առանձնանում է ոչ միայն բարձրության տարբեր գոտիների միջև գյուղական բնակչության և բնակավայրերի թվաքանակի մեծ տարբերություններով, այլ նաև գյուղերի միջին մարդաքանակի: Վերջինս ևս առանձնանում է տարածաշրջանային նկատելի տարբերություններով: Այսպես՝ Սյունիքի մարզի 801–1000 *մ* բարձրության գոտում գյուղերի միջին մարդաքանակը կազմում է ընդամենը 104 մարդ, իսկ Արարատի մարզում՝ 2353, կամ տարբերությունը կազմում է 22,6 անգամ (աղյ. 3): ՀՀ տարածքի բարձրության մնացած գոտիներում ևս առկա է գյուղերի միջին մարդաքանակի զգալիորեն մեծ տարբերություններ (1801–2000 *մ* բարձրության գոտում գյուղերի միջին մարդաքանակը Գեղարքունիքում 2639 մարդ է, Սյունիքում՝ 209, Վայոց ձորում՝ 370, Շիրակում՝ 874, Արագածոտնում՝ 766, Արարատում՝ 357, Լոռիում՝ 1219, Կոտայքում՝ 867):

Եզրակացություն: Ըստ ՀՀ գյուղական տարաբնակեցման տարածաշրջանային ժամանակակից պատկերի վերլուծության արդյունքների ընդհանրացման.

1. Տարածքի լեռնային բնույթը և բնաաշխարհագրական պայմանների խիստ բազմազանությունը զգալիորեն սահմանափակում են ՀՀ բնակեցման արեալը և իրենց անմիջական ու միջնորդավորված ազդեցություն են թողնում գյուղական տարաբնակեցման տարածաշրջանային պատկերի վրա,

2. ՀՀ-ն առանձնանում է գյուղական բնակչության և բնակավայրերի խիստ անհավասարաչափ տեղաբաշխմամբ և այն բնութագրող տարածաշրջանային զգալիորեն մեծ տարբերություններով: Այդ հանգամանքն իր ազդեցություն է թողնում տարածքի տարբեր շրջաններում տարածքային ու այլ կարգի ռեսուրսների յուրացման և տնտեսության (հատկապես՝ գյուղատնտեսության) տարբեր ճյուղերի զարգացման և տեղաբաշխման վրա,

3. ՀՀ գյուղական բնակչության բաշխումն ըստ գյուղերի մարդաքանակի խմբերի խիստ բևեռացված է և առանձնանում է տարածքային ու տարածաշրջանային զգալիորեն մեծ տարբերություններով: Գյուղերի մարդաքանակի այդպիսի բևեռացվածությունը մի դեպքում կարող է հանգեցնել բնակչության թերծանրաբեռնված զբաղվածության և աշխատուժի արտահոսքի, մյուս դեպքում՝ աշխատուժի պակասի և գյուղական տարածքների առկա ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման,

4. ՀՀ գյուղական տարաբնակեցման տարածաշրջանայի բնորոշ գծերից է նաև բնակչության ու բնակավայրերի և գյուղերի մարդաքանակի ըստ ծովի

մակարդակից ունեցած բարձրության տեղաբաշխման տարածքային և տարածաշրջանային մեծ տարբերությունները: Գյուղական տարածքների բնութագրական այս կողմը ևս իր ազդեցությունն է թողնում ՀՀ տարածքի բարձրության տարբեր գոտիներում առկա ռեսուրսների օգտագործման և տարածքի յուրացվածության վրա: ՀՀ ցածրադիր տարածքներում գյուղական բնակչության առավել մեծ չափով կուտակումը և գյուղերի խոշորացումը նվազեցնում է պիտանի և արժեքավոր հողատարածքները գյուղատնտեսության մեջ ներառելու հնարավորությունները, իսկ բարձրադիր տարածքներում՝ բնակչության փոքր թիվը և գյուղերի փոքր մարդաքանակը չի նպաստում տարածքի յուրացվածության մեծացմանը,

5. գյուղական բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և գյուղերի մարդաքանակի աշխարհագրական առկա պատկերն իր նշանակալից ազդեցություն է թողնում ինչպես ՀՀ ամբողջ տնտեսության, այնպես էլ առանձին մարզերի, տարածաշրջանների և գյուղական բնակավայրերի զարգացման տարբեր կողմերի վրա: Կառավարման տարբեր մակարդակներում սոցիալ-տնտեսական զարգացման տարաբնույթ ծրագրերի իրականացումը պետք է նպաստի ՀՀ տարածքում գյուղական բնակչության բաշխման միջև առկա բևեռացվածության նվազեցմանն, անհրաժեշտության դեպքում՝ իրականացնել ծրագրեր, որոնք կնպաստեն ՀՀ տարբեր մարզերի և տարածքների միջև գյուղական բնակչության վերաբաշխմանը և առկա բևեռացվածության թուլացմանը:

Ստացվել է՝ 16.04.2021
Գրախոսվել է՝ 19.07.2021
Հաստատվել է՝ 16.12.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով* (2020): https://armstat.am/am/?nid=82&id=2324
2. *Հայաստանի ժողովրդագրական ժողովածու* (2020): https://armstat.am/am/?nid=82&id=2347
3. Պոտոսյան Ա. *Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը*: Երևան (2017), 466 էջ:
4. Подосян А.А. Основные факторы развития и преобразования сельского расселения в горных странах (на премере РА). *Геополитика и экогеодинамика регионов* **10** (2014), 719–723.
5. Պոտոսյան Ա. ՀՀ գյուղական տարաբնակեցման ձևավորման բնաաշխարհագրական նախադրյալները: *Ազրոգիտություն* 11–12 (2011), 553–558:
6. Погосян Д.А. *Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Арм. ССР*. Ереван, изд-во АН Арм. ССР (1986), 11–78.

А. А. ПОДОСЯН

РЕГИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ СЕЛЬСКОГО РАССЕЛЕНИЯ РА

Резюме

В статье выявлены территориальные различия и особенности размещения сельского населения и поселений, а также людности сел. Горный характер местности значительно сокращает площадь населенных пунктов РА, влияя на

географическую картину сельского расселения. Размещение населения, в частности сельского, и сельских поселений отличается неравномерным характером и характеризуется сильной поляризацией. Так в 176 селах с постоянным населением до 200 человек (19% сел) проживает только 1,5% сельского населения, а на группу сел с населением более 3000 человек (10,4% от их общего числа) приходится более 38% сельского населения. 83% сельского населения проживает в селах с численностью населения более 1000 человек, но они составляют 43,1% от общего числа сел в стране, а в селах с населением 201–1000 человек (37,8% от общего числа сел) проживает лишь 15,4% сельского населения. На территории РА распределение сельского населения и поселений по разным высотным поясам обусловлено историко-географическими, природно-географическими, социально-экономическими, урбанизационными, территориальными, геополитическими и некоторыми локальными условиями и факторами. Сельские поселения Армении расположены на высоте от 400 до 2350 *м* над у. м., «скопление» наибольшего количества сел наблюдается на высотах 801–1000 и 1801–2000 *м*. В высотном поясе 801–1000 *м* проживает более 35% сельского населения (8,3% территории страны), а на высоте 1801–2000 *м* – 16,2%. Из-за сосредоточенности сельского населения и поселений на определенных высотах их распределение на территории республики по высотным зонам характеризуется резкой поляризацией, что обусловлено прежде всего обеспеченностью природными и территориальными ресурсами, этих территорий. В РА наблюдаются существенные различия в распределении сельского населения и поселений, их плотности в пределах одного и того же высотного пояса. Следует отметить, что между поясами существуют различия не только в численности сельского население и поселений, но и в людности сел. Современная географическая картина сельского населения и поселений, людность сел РА оказывают значительное влияние на экономику страны, на различные аспекты развития марзов, сельских территорий и поселений. Реализация программ социально-экономического развития должна способствовать снижению существующей поляризации размещения сельского населения и его более равномерному распределению на территории РА.

A. H. POTOSYAN

THE REGIONAL FEATURES OF RURAL SETTLEMENTS DISTRIBUTION OF RA

Summary

Analysis of rural settlements' regional patterns in RA and the features and regional differences of rural population and settlements distribution, as well as villages' population numbers were revealed and accomplished. Mountainous relief significantly reduces the populated area of RA and influences the rural settlements' territorial patterns. Uneven distribution of both total and rural population is typical for RA. The distribution of rural population by the settlements' population number

groups in RA is polarized. In 176 villages with permanent population up to 200 (19% of rural settlements) live 1.5% of the total rural population of RA. In villages with population above 3000 (10.4% of rural settlements) live more than 38% of rural population. 83% of rural population lives in villages with population above 1000 (43.1% of total rural settlements). 15.4% of rural population lives in villages with population between 201–1000 (37.8% of rural settlements). The distribution of rural settlements and population in different elevation zones is caused by historical-geographical, natural-geographical, socio-economic, urbanization, regional, geopolitical and other factors. The rural settlements are distributed between 400–2350 *m* in RA, but 801–1000 and 1801–2000 *m* zones are more densely populated. 35% of the total rural population lives in 801–1000 *m* zone (8.3% of country's territory) and 16.2% of rural population live in 1801–2000 *m* zone. There are big differences of rural population and settlements number between elevation zones and also regional differences of average population number of villages. The current geographical patterns of the distribution of rural population and settlements and villages' population numbers have a significant impact on the economy of RA, as well as on different aspects of development of particular regions and settlements. Implementation of socio-economic development programs at different levels should contribute to reduction of existing polarization rural population distribution in RA.